ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի <<Շահումյանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի , ֆիզկուլտուրա (5 դասաժամ), քիմիա (8 դասաժամ), ռուսաց լեզու (4 դասաժամ), թվային գրագիտություն և համակարգչային գիտություն (8 դասաժամ), ֆիզիկա (8 դասաժամ), իմ հայրենիք (2 դասաժամ), իմ հայրենիքը և աշխարհը (3 դասաժամ), հայոց պատմություն (15 դասաժամ), համաշխարհային պատմություն (6 դասաժամ), հասարակագիտություն (9 դասաժամ), անգլերեն (10 դասաժամ), հայոց լեզու (10 դասաժամ), ՆԶՊ (5 դասաժամ), մաթեմատիկա (6 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.դիմում (ձև 1),

2. 1 լուսանկար 3×4 չափի,

3.բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

4.անձը հաստատող փաստաթուղթ,

5.<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն (առկայության դեպքում),

6.ինքնակենսագրություն(ձև 5),

7.այլ պետությունների քաղաքացիները՝ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

9.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),

10.որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 8-ից մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ,ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը,բացի շաբաթ ,կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցութը տեղի կունենա 2025թ. սեպտեմբերի 23-ին՝ ժամը 14:00-ին,Շահումյանի միջնակարգ դպրոցում, հասցե՝ գ.Շահումյան,Ի.Հարությունյան 1փակուղի ,շենք 4:

Տեղեկությունների համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ 093845657: